«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատանքների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բարոյական դաստիարակություն

Դաստիարակ՝ Քրիստինա Դավթյան

Մանկապարտեզ «107» ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն.....2
Գլուխ առաջին.....4
Ենթագլուխ.....5
Օրինակելի պարապմունք.....6
Խաղ-ներկայացում.....9
Եզրակացություն.....10
Օգտված գրականություն.....11

Ներածություն

Բարոյական Դաստիարակություն

Բարոյական դաստիարակության առաջատար խնդիրը մարդասիրական հարաբերությունների մշակույթի դաստիարակումն է: Այս տարիքում երեխաներն իրենց հասակակիցների հետ շփումների ժամանակ պետք է ցուցաբերեն բարյացակամություն, հոգատարություն, կարեկցանք, փոխօգնության պատրաստակամություն:

Շարունակվում է աշխատանքը բարոյական նորմերի դաստիարակության ուղղությամբ: Դրա էությունը արդարամտության, ճշմարտասիրության, կարեկցանքի, բարության, բարի, լավ արարքը գնահատելու կարողության ձևավորումն է:Բարոյական զգացմունքներն ինքնատիպ խթան են՝ հասակակիցների, մեծերի հետ համատեղ գործունեության համար: Կուլտուրական վարքի, հմտությունների, բարյացակամ, հոգատար վերաբերմունքի ձևավորումը շարունակում է մնալ այս տարիքային խմբի երեխաների դաստիարակության կարևոր խնդիր: Երեխաներն աստիճանաբար սովորում են հմտորեն և բարեկիրթ կերպով օգտվել ճաշի սպասքից, ուտելուց հետո շնորհակալություն հայտնել, հարգալից բարևել, օգտագործել «ցտեսություն», «հաջողություն», «ներողություն», «բարի գիշեր» արտահայտությունները: Բարեկիրթ վարքի, հարգալից վարվելաձևի կանոնների, վարքի նորմերի դաստիարակման լավագույն միջոց են բարոյագիտական զրույցները, դիդակտիկ խաղերը, պարապմունքները, առօրյա տարաբնույթ միջոցառումները: Դրանց նպատակն է՝

— Երեխաների մեջ ձևավորել անձնական վերաբերմունք բարոյական նորմերի պահպանման կամ խախտման նկատմամբ:

— Սովորեցնել ճիշտ գնահատել ընկերների արարքները. Կարեկցել վիրավորված և խրախուսել արդարամիտ ընկերոջը:

— Շարունակել աշխատանքները երեխաների միջև բարիդրացիական հարաբերություններ ձևավորելու ուղղությամբ / պատմել այն մասին, թե ինչով է աչքի ընկնում խմբի յուրաքանչյուր անդամ , օգնել երեխային համոզվելու, որ իրեն շատ են սիրում և գնահատու/:

— Դաստիարակել զսպվածություն, բարություն, արդարացիություն, սխալ արարքի համար ունենալ ամոթի զգացում:

— Հիշեցնել երեխաներին՝ բարևելու, հրաժեշտ տալու անհրաժեշտության մասին: Սովորեցնել քաղաքավարի արտահայտել խնդրանքը, ցուցաբերած օգնության համար հայտնել շնորհակալություն:

— Ճիշտ դիմել մանկապարտեզի աշխատակիցներին, չխառնվել մեծերի խոսակցությանը:

— Ամրապնդել առարկաների նկատմամբ խնամքով վերաբերմունքը, սովորեցնել օգտագործել դրանք ըստ նշանակության, դնել դրանք համապատասխան տեղում:

Գլուխ առաջին

Բարոյական արժեքներով դաստիարակված մարդը առաքինի է, բարեկիրթ: Այդպիսի մարդու նիստուկացը, գործողություններն ու արարքները, մարդկանց հետ հարաբերությունները, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը, յուրահատուկ են և օրինակելի: Բարոյական զարգացումից զուրկ մարդը հասարակության համար անտանելի բեռ է:

Բարոյական գիտակցության հետ մեկտեղ բարոյական դաստիարակության ընթացքում ձևավորվում են անձնային կարևորագույն հատկություններ, որոնք դաստիարակվում են բարոյական գիտակցությունից անկախ և վեր են ածվում սոցիալական զգացմունքների: Այդպիսի հատկություններից են, օրինակ, բարությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը, մաքրասիրությունը: Աստիճանաբար երեխայի կողմից գիտակցվում և արժևորվում են նաև նշված զգացմունքներ, որոնք համալրում են նրա բարոյական որակը: Բարոյական դաստիարակության երկու կողմերն էլ ենթադրում են մանկավարժի ակտիվ մասնակցություն և աջակցում: Մանկավարժը բարոյական դաստիարակության ընթացքում հանդես է գալիս«սոցիալական ուղեկցողի» դերում:

Հեգելը գրում էր.«Երբ մարդը կատարում է այս կամ այն բարոյական արարքը, դրանով դեռևս առաքինի չէ: Նա առաքինի է այն դեպքում, երբ վարքագծի այդ եղանակը դառնում է նրա բնավորության մշտական գիծ»:

Ենթագլուխ

Բարոյական արժեքը մի կատեգորիա է, որն արտացոլում է որոշակի անհատի վերաբերմունքը նրա բարոյական ընտրության նկատմամբ, որը որոշում է նրա վարքի ռազմավարությունը ցանկացած կոնկրետ իրավիճակում:

Բարոյական դաստիարակության տեսական հիմքերը բխում են բարոյագիտությունից, որն ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի չափանիշներ՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով: Բարոյականությունը բարոյական վարքի, նորմերի և կանոնների գիտակցման աստիճան է, ներքին սուբյեկտիվ դիրքորոշում աշխարհի հանդեպ: Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է, այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

- Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:
- Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում:
- Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ:
- Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ: Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների դասիարակչական ներուժով, դաստիարակող մեծահասակների մանկավարժական վարպետությամբ:

Օրինակելի պարապմունք

Օգտվելով ԽԻԿ համակ.

Օրինակելի պարապմունքի պլանավորում

Առարկա Խոսք.զարգ. Բարեկիրթ վարվեց.կանոն.	Խումբ Միջին 3-4 տ.	Թեմա Բարոյական դաստիարակություն	Տևողություն 20-25ր.
Պարապմունքի նպատակները	**Գիտելիք** ● Զրույց ● Երեխաների մեջ ձևավորել բարոյական վերաբերմունքի նորմերի պահպանման կամ խախտմ. նկատմամբ ● Զարգացնել բարություն, զսպվածություն,արդարացիություն ● Խթանել հասակակիցների հետ հաղորդակցումը ● Խաղաղ խաղ **Կարողություններ** ● Ճշգրիտ կատարել հրահանգները ● Զարգացնել ինքնուրույնությունը ● Տալ պատկերացումներ բարոյական նորմերի վերաբերյալ **Արժեքային համակարգ** ● Օգնություն առաջարկել ● Ընդունել հասակակիցների օգնությունը ● Գործածել բարեկիրթ բառեր,դրսևորել բարեկիրթ վարքագիծ:		

2.

Ուսումնական կազմակերպման ձևեր	Ցուցադրում Քննարկում Անհատական աշխատանք Փոքր խմբերով աշխատանք Զույգերով աշխատանք
	ծադիր ցուցադրման նյութեր
	Նկարներ Երեխաների թվով նկարներ(բարեկիրթ վարվեցողության կանոնների վերաբերյալ)
Խթանման փուլ	Կազմակերպել խաղ-ներկայացում երեխաների մասնակցությամբ
Իմաստի ընկալման փուլ	Դասիարակի հրահանգը լսելով երեխաները հավաքվում են և միասին խաղ են խաղում Խաղից հետո կազմակերպում են փոքրիկ հարցաշար խաղի վերաբերյալ Մասնակցում են բոլորը Հարցից հարց կազմվում է փոքրիկ ուսումնադաստիարակչական պատմություն
Կշռադատման փուլ Ամփոփում	Հարցեր բոլորին Ինչ՞ աշխատանքներ կատարեցինք այսօր Ինչը՞ամենից շատ Ձեզ դուր եկավ կատարված աշխատանքներից Ինչն՞ էր Ձեզ համար դժվար

Դաստիարակի խոսքը

- Ապրեք երեխաներ դուք շատ լավ ընկալեցիք և մասնակցեցիք այս պարապմունքին

1. Դիտարկող տնօրեն- Այս պարապմունքի միջոցով երեխաները մեծ գիտելիք ստացան բարոյական դաստիարակության մասին: Պարապմունքն անցավ ուրախ և աշխույժ մթնոլորտում:
2. Դիտարկող-մեթոդիստ- Երեխաները շատ ուրախ էին, ոգևորված պատասխանում էին առաջադրված հարցերին
3. Դիտարկող-դաստիարակ- Այս թեման շատ կարևոր է յուրաքանչյուր երեխայի համար: Երեխան փոքրուց պետք է իմանա բարոյական դաստիարակության կարևորության մասին:

Խաղ-ներկայացում

Մենք ծիծաղում ենք և տխրում

Նպատակը

- Շարունակել սովորեցնել երեխաներին՝ պատկերված ապրումներով նկարագրել և տարբերակել մարդկանց ներքին հոգեվիճակը,
- զարգացնել տրամադրությունը գուշակելու կարողությունը՝ ժեստերի և հույզերի միջոցով,
- զարգացնել վրձնի կամ մատիտի միջոցով մարդու հոգեվիճակը պատկերելու կարողությունը:

Անհրաժեշտ պարագաներ: Յուրաքանչյուր երեխայի համար ունենալ տարբեր տրամադրություններ արտահայտող նկարներ, մեկական հայելի, անավարտ տարրերով նկար-հանելուկներ՝ զգացմունքների արտահայտման համար, ֆլոմաստերներ:

Ընթացքը

Նկարներին նայելով երեխաները որոշում են մարդու հոգեվիճակը՝ ելնելով դեմքի արտահայտությունից:

Անհրաժեշտ է՝

- անվանել և բացատրել պատճառը(ուրա՞խ է, թե՞ տխուր, ինչի՞ց կռահեց),
- օգտագործելով հայելին՝ դիմախաղով արտահայտել տարբեր զգացմունքներ,
- նկարելով արտահայտել մարդու հոգեվիճակին համապատասխան տարբեր հույզեր:

Եզրակացություն

Այսպիսով մենք խոսեցինք բարոյական դաստիարակության առանձնահատկությունների մասին, դրանց դերը կրթական գործում: Այս աշխատանքը ես իրականացրեցի միջին խմբում, դիտարկողները դիտում էին պարապմունքի ընթացքը և եկան հետևյալ վերլուծությանը, որ երեխաները ակտիվ էին պատասխանում առաջադրված հարցերին:

1. Հետազոտությունից հետո ես ինձ համար հայտնաբերեցի, որ չնայած երեխաները 4-5տարեկան էին, բայց լիովին հասկացան իմ կատարած պարապմունքի իմաստը և կարևորությունը:
2. Ես նպատակ էի դրել իմ առջև, որ երեխաները դեռ փոքր տարիքից ընկալեն և հասկանան, թե ինչքան կարևոր է և անհրաժեշտ բարոյական դաստիարակությունը և հասա դրան:
3. Դաստիարակներին խորհուրդ կտամ հաճախ անցկացնել օրինակելի պարապմունքներ նվիրված բարոյական դաստիարակությանը: Մանկապարտեզից պետք է սկսել այդ գործընթացը:

Օգտված գրականություն

1. Մանկապարտեզի միջին խմբի 4-5 տարեկանների կրթական համալիր ծրագիր-2011թ.
2. Լալա Սմբատյանի «Մենք ծիծաղում ենք և տխրում» էջ110